

Երիտասարդ հայ գիտնականները կարող են իրենց նախագծերը զարգացնել Սոկոլկովո համալսարանի աջակցությամբ. ՄԲՀ փոխտնօրեն

Երիտասարդ հայ գիտնականները կարող են իրենց նախագծերը զարգացնել Սոկոլկովո համալսարանի աջակցությամբ, Երևանում կայացած քննարկում-սեմինարի ժամանակ հայտարարեց Սոկոլկովոյի Բաց համալսարանի գործադիր տնօրենի տեղակալ Եկատիրինա Մորոզովան: «Այնպես է ստացվել, որ տեխնոլոգիաների և ինովացիաների թեմայով մենք Ռուսաստանում սկսել են զբաղվել մի քանի տարի առաջ, քան ԱՊՀ տարածաշրջանում: Վերջին 5 տարիներին մենք ձեռք ենք բերել փորձառություն, որով մենք հիմա ուրախ կլինենք ձեզ հետ կիսվել, ինչպես նաև զգուշացնել սխալների մասին, որոնք պետք չէ գործել այս ճանապարհին», –ասաց Մորոզովան: Նրա խոսքերով, ցանկացած նախագիծ կարող է դառնալ Սոկոլկովոյի մաս, եթե այն համաշխարհային շուկաներում հեռանկար ունի: «Մենք ուղղություն ենք վերցրել ոչ միայն Ռուսաստան, այլ նաև արտերկիր: Եթե Հայաստանից նախագիծը կարող է ապացուցել, որ այն ԱՊՀ–ի, Ռուսաստանի, Եվրոպայի, կամ Ամերիկայի շուկաներում հեռանկար ունի, ապա մենք կարող ենք սատարել» –ասաց Մորոզովան: Նրա խոսքերով, սովորաբար այն հետևյալ կերպ է արվում, տվյալ նախագծի թիմի մի մասը Հայաստանում է լինում, մի մասը՝ Ռուսաստանում: «Քանի որ գտնվելով Ռուսաստանում, կարելի է ելք ունենալ դեպի ներդրողներ, ֆինանսներ, միջազգային կապեր և ուսուցում, օրինակ ծրագրավորողները, ինժեներները կարող են այստեղ լինել», –ասաց նա: Քննարկում-սեմինարը կազմակերպվել էր մարտի 23–ին «Երիտասարդ նորարարի դպրոց» նախագծի շրջանակում, որն անցկացվում է Հայաստանի Նորամուծության և ձեռներեցության ազգային կենտրոնի կողմից՝ Երևանում Ռուսական գիտության և մշակույթի կենտրոնի հետ համատեղ:-